Գործ թիվ ԵԴ2/0637/02/24

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին

01 փետրվարի 2024թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բադիրյանս, քննության առնելով ըստ հայցի «Բիլդինգ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Բիլդինգ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ խնդրելով անվավեր ճանաչել (վերացնել) ՀՀ Կոտայքի մարզի գյուղ Զովունու կրթահամալիրի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.12.2023 թ. թիվ 1-1 որոշմամբ հայտարարված թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2024թ. կազմված թիվ 2-4 արձանագրությամբ՝ «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը:

Հայցադիմումը 26.01.2024 թվականին մակագրվել է դատավոր Ա. Բադիրյանին, դատավորին է հանձնվել 29.01.2024 թվականին:

Սույն հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ կետերի համաձայն՝

1. դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Scanned with CamScanner

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանողից անհրաժեշտ է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/13» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ինչպես նաև սույն գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Բիլդինգ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեից պահանջել «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/13» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

3. Թիվ ԵԴ2/0637/02/24 քաղաքացիական գործը դատական նիստում քննելու միջնորդություն չներկայացվելու դեպքում եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 2024 թվականի մարտի 14-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**

Scanned with CamScanner